

Արևելեցեան

10
ՓԲՅ

Պատգ

10
ՓԲՅ

Ա. ՏԱԵՐ

1873 ՀՈՒՏԵՄԲԵՐ 8 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ

ԹԻԻ 52

Ա.ՉԳ.Ա.ՅԻՆ

ԺԱՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՇՈՒՂ

ԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆՈՒԹԵԱՆ ՀՅՑ

Երեւանի անկման հեղինակ նոյն ինքն իր Երեւանն է, կրօն Օրհմար որ անցեալ ուրբաթ օր ընդհ. ժող հրահրեց և իրոշեալ ժաման չիցաւ իր հրահրարան, և վերն սպառնեց մէկ քանի ժամ ընդդիմանալով առ ամբողջ յորդ որ կարգաւր:

Օրհմարի այս կարծեաց հակառակ մեր առած ստաց տեղեկութիւններն կը հատուակեն թէ նոյն օրը դիւանը կարգարարք Ս. Պատրիարքի վար չ'իջնէ, մինչև որ իրեն դիւանին կողմէ մասնաւոր հրահր չ'իջնի:

Սակայն դիւանը որ զՍ. Պատրիարք վար չ'իջնելու մէջ մասնաւոր նպատակ մը կ'երևի թէ ունեցած է, ժողով գումարեղէն ետև առեան չ'բանար, և երբ իրեն առեան չ'բանարուն կ'առաջադրէ կը հարցուի, կը պատասխանեն թէ Ս. Նախագահին կ'սպասէ, և թէ չ'կրնար առեան բանալ մինչև որ Նորին Սրբազանութիւնը ժողովի չ'իջնէ:

Ս. Ինչ գարծաւաճք է այս, ընթացող, ինչ կը նշանակէ Դիւանին մէկ կողմէն Ս. Պատրիարք Հօր ըսելու թէ ժողովի մ'իջնէր, և միւս կողմէն ժողովը մէջ երեսփոխանաց հեղափոխութիւնը, Նորին Սրբազ.

նութեան ժողովի չ'իջնելուն վրայ դրոշմը:

Դիւանին այս ընթացքն անշուշտ աննպատակ չէր, վասն զի ինչ հարկ տեսան բանալու համար Նախագահին դարուն սպասելու, ինչ գործ տներ իրիմեան այդ նրա տին մէջ, իրեն վերաբերեալ ինչ եւեւ ետեւ ետեւ հասնելու անհնար խնդիրը օգոտաւ Չիկն լուծուած ու վերջացած էր, չէր կրնար դիւանը երկրպագին եկեղեցական մը փոխ նախագահ կարգելով արեան բանալ թէ արդարեւ նոյն օրը նախագահին ամբողջ պարտաւ չ'զգէրու ստիպուած կրնէր հարկ մը կար:

Ամեն ինչ կրնար ընել Դիւանը սակայն չ'բրտու, և ոչ միայն չ'բրտու, այլ իւր տարտամ ընթացքովն տեղի առաւ երեսփոխանաց կասկածելու որ իրիմեան ժողովրդեան յուզեալ սիրտը անեղի տագնապելու համար վար չ'իջնէր, մինչդեռ Նորին Սրբազանութեան վար չ'իջնելուն պատճառ և հեղինակ նոյն ինքն դիւանն է: վասն զի նա ըսած է որ վար չ'իջնէ, և նա ազդարարած է որ ժողովը չ'իջնէ կայանայ առանց մասնաւոր հրահրի:

Եւ ինչու այս, ահա հասնել իրիմեանի անկման շարժանքը, և այն գաղտնեաց մէջ նաեւ ժողովը դեան իւր երեսփոխանութեան հետ ունեցած հաշտեց կապը, զոր պէտք է քակել ծայրը գտնելու համար:

Յայտնի է թէ դիւանը որոյ առաջին Առեւապետ Տատեան վսեմ.

Յարութիւն պէջ նաեւ ՅԱԵՐՈՒ մէջ գտնուելու դժբաղդութիւնն ունեցած է, մի բանի ՅԱԵՐՈՒներու և մի բանի ալ յառաջդիմականներու հետ մտերմարար տեսակցելէ ետև իւր առաջարկը քաղեցնելու համար անոնց մտերմական հաճութիւնը բուսացած և հրահր կարգացած էր ընդհ. ժողովը Ղայաթիա և գործը կողմ գումարը:

Տարակցած չը կայ թէ դիւանը 3-4 շաբաթ անընդմիջաբար խորհելէ և շատերու հետ ալ խորհողակցելէ ետև այս որոշումն որ իւր ստորագրած հանրապրին պահանջումն էր, աղէկ դատած ու ըրած էր, անկէ հետեւիլը չարեաց պատասխանատուութիւնը իրեն և միայն իրեն վերապահելով:

Դիւանը երբ ժողովրդեան պահանջման հակառակ և միայն իւր ըրած որոշման համաձայն ժողով գումարեղէն ետև Ս. Պատրիարք Հօր վար ժողովի իջնելը կարգելու, և որով մէկ կողմէն երեսփոխանութիւնը Ս. Պատրիարք Հօր վար չ'իջնելուն դէմ կը գրգռէ, և միւս կողմէն ժողովրդեան արդարացի և օրինաւոր պահանջման անըտող դրանու ելով պողովուրդը իւր երեսփոխանութեան դէմ կը յուզէ: ով կը վիճի պատասխանատու այս կրկին չարեաց, Դիւանը թէ իրիմեան:

Անշուշտ դիւանը սակայն մեղք չէ կրնար ըմբռնել թէ որ օրինօք դիւանին պակասութիւնը իրիմեանի վրայ ծանրացաւ, և դիւանին

անդ՝ Խրիմեան գաղափարաբան թեան արժանի համարուեցաւ ՅԱԵՐՈՒ ԱՆՔԻՆ, ՅԱԵՐՈՒ՝ որոնցմէ տնայնք այն չափ յառաջ գոցին, որ չամառեցան աւրբաթ օր Ղալաթիոյ և ժողովրդ գեան մէջ ըսեալ թէ՛ այս ամեն անկարգութեանց պատճառ և հեղինակ Խրիմեանն է, և Օրագիր իսկ անոնց արձագանգը կրկնեց հրատարակաւ, ամեն արդարութիւն ու իրաւունք առ որն կրկնելով:

Դիւանին այս անպատշաճ ընթացքին մէջ ըստ մեզ սա գազանիքը կար որ՝ վճարեմ Յարութեան պէր Տատեան ըստ սրբա՛ օգոստ. 24 ի նիստին վրայ ճնշում եղած լինելուն պահ մ'առաջ թէպէտ անհամոմիտ, բայց յետոյ ՅԱԵՐՈՒ բանակին մէջ դանուելու հակառակ թեան մէջ լինելաւ, կամ պետք էր օգոստ. 24 ի ժողովոյն վրայ ժողովրդեան ճնշում բանեցուցած լինին խոստովանիլ բացարձակապէս, կամ ՅԱԵՐՈՒ բրած դռնովակ նիստի պահանջման անտեղութիւնը յայտնելով յետս կոչել իւր ստորագրութիւնը, բայց սրով հետևեալ ասանց երկուքն ալ իրեն արժանապատուութեան կը դպչէին ընել, ստիպուեցաւ ժողովը չփոթ վրայ իւր մտքով զործել, մէկ կողմն Սրբազան Պատրիարքի ազդարարելով որ վար չ'իջնէ, և միւս կողմն ժողովրդեան կամքը ներկայացնող պատուաւոր պատգամաւորութեան կուրբերութիւն չ'տալով, որպէս զի ժողովուրդը առանկէ ևս յուզի և ժողովատեղւոյն դրան սուջև կենարով արգելու իրեն ստիպանաց մուտքը, և սեղի սայ եղբայր զեղբայր ծեծելու այն դառն հետևանաց, որք անգի ունեցան եկեղեցեաց մէջ, և անսխալ անհամ զործեցին Ս. Պատրիարքի իբր խաղաղութեան եկեղեցականի մը հրաժարականը փոթեցնելու կարելւորութիւնը, որոց համար պատասխանատու է գիւտնը այժմ և ընդ միջոց:

ԱՍԵՆԱՊՏՈՒ ԻՐԻՄԵԱՆ ՅՐԱՋԱՆ
ԻՆՉ ՊԵՏԻ ԸՆԵ
Ամեն Խրիմեան սրբազանը երէկ ընտրելի էր, այսօր Պատրիարք էրէկ ՀԱՅՐԵՎՈՒՄ՝ երէկ անաջարկող էր՝ այսօր գործադիր վերջնակէս ամեն կողմ պիտի գոչէ Խրիմեանի դէմ, և խոսիլը պիտի ալը

գործել չէ, հրամայե մեքենային զըլու իր, հիւոն սա ազգային կառուի որ տեսնենք 7:

Ասանց գէտ Խրիմեան սրբազան մէկ խօսք մ'ունի միայն, « կառուր նիստիւն մարդով կը գործուի, ևս մեքենայն կարգադրեմ, գուր ալ նիստ և մարդ պատրաստեցէք 7:

Ի՞նչ պիտի ընենք ուրեմն այս կնճռոտ վիճակին մէջ. Եկեղեցական անիշխանութիւնը վերջին ծայրն հասած, ազգային անտարբերութիւնը կրակին ընդունմէջ զմտեղուած, պիտի տութիւնն ու ծուրութիւնը բողոքնուն յիստ պարսաւում, մէկ կողմէրով պարտք և իրաւունք միայն բառական կ'ըստով ըմբռնում, դարձեալ կը հարցնենք՝ ի՞նչ պիտի ընենք և ի՞նչ պիտի ընէ Խրիմեան սրբազանն:

Խրիմեան սրբազանին անունը թէպէտ Մկրտիչ, բայց նա ոչ երազ գործ Մկրտիչն է և ոչ գերբնական զըլութեամբ մեզ կրնայ մեր դարաւոր ախտերէն մկրտել:

Մէք, այսինքն Ազգը ուզեցինք Խրիմեան սրբազանը մեզ գլուխ՝ բայց արդեօք խորհեցանք անգամ մը որ մէք այն դիտան մարմինը կրնանք ստատ(1):

Ամեն Խրիմեան սրբազան գրող է, խօսող է և գործող է, բայց մէք մէք գրող և խօսող խիստ շատ ունինք իսկ գործող այս շատ դժուար է գտնել և որչափ որ դժուար է այս գտնել՝ առկից հաղարապատիկ աւելի դժուարութիւն մը կայ առջևնիս: Մէք գործող չունինք բայց միլիոնաւոր նախանձայններ(2) կը վիստան ամեն կողմ:

Խրիմեան սրբազանն պիտի պահանջենք որ՝ վանքերը բարեկարգէ, իսկ առաջին քաղաքիսին անոր դէմ երկնիք խոջնդ սաներուն դէմ մարտնչի նք պիտի սչ Խրիմեան սրբազանն պիտի պահանջենք որ՝ Ազգային վարժարանները բարեկարգէ ու աւելցնէ, իսկ այս մասին ծանուցեալ հակառակորդներուն բերաննուն չափը ամեն պիտի սչ Խրիմեան սրբազանն պիտի պահանջենք որ՝

(1) Անտարակոյս ոչ:
(2) Հայոց պատրիարքութիւն յափշտակելու նախանձարոր ենթակոյսաները հիանարկէ:

գաղափարական ազգայնոց հարստահարութեան դէմ Տէրութեան ու շարութիւնը հրաւիրէ, իսկ օրին և ժամանակ չանցուցած մեր ցուէրը ճշդիւ և անանց չափաւորութեան անոր հաղորդէնք պիտի սչ Խրիմեան սրբազանն պիտի պահանջենք որ՝ Սահմանադրութիւնը կեդրոնացնէ ու ազգային ընտրական արտօսութիւնը անբացառիկ կերպով Ազգին դարձնէ. իսկ մէք Սահմանադրութեան համեմատ վերաւիճք ու նորին սրբազանութեան քով գուր ևս անգամներ ամենք պիտի սչ (1):

Ուրեմն ի՞նչ կրնայ ընել մէկ Խրիմեան սրբազան մը՝ Քրիստոս՝ քրիստոնէութիւնը 12 առաքելաց ձեռքով տարածեց. ինքը իբրև զլուխ իր պարտքը կատարեց և առաքելուք սոյ իբրև մարմին իրենց պարտքը կատարեցին, կրնանք հաւատալ որ Խրիմեան սրբազան Քրիստոս մ'եղած ըլլայ՝ քաւ վրիժ ուրեմն եթէ մարդացեալ անսխալ Ստատածը առանց 12 օգնականի չը գործեց, հողեղէն և սխալական մարդ մը, Խրիմեան մը՝ ի՞նչ կրնայ ընել:

Խրիմեան սրբազանին համար այսօր ամեն բերան գոհութիւն կը կարգուի մէք և Կառուցելու պիտի աշխատինք որ՝ այս գոհութիւնը գրծ գոհութեան չի փոխուի, նաև 100 ին 99 վտաս է նք որ՝ Խրիմեան սրբազան ինքը իր կողմէն առիթ չպիտի սայ այս ընդհանուր գոհութիւնը գոհութեան չի փոխուելուն, բայց ասոր հակառակը 100 ին 99 այն կարծիքն ունինք որ՝ Ազգը նոյն իսկ ինքը իր պարտադանցութեան դիմելն չեղելով պիտի կապէ Խրիմեան սրբազանին ձեռքն ու ստոր և ՚ի խաչ պիտի դատապարտէ զայն (2):

Օ. ԽՈՋԱՍԵՐԵԱՆ
Օրագիր Ի- 2

Ազնիւ Խմբագիր Ա. Փողոյ
Ա. Փողոյ տարածամ գաղաբումը արդարև մեծ միջո պատճառաւ էր ամեն սղջամիտ և ազգասէր

(1) Ա.Մ. Ք. Ղազարոսեանի և Ս. Փափաղեանի նման անձեր, որպէս զի Սահմանադրութիւնը մտկայցենք իննսուն տարեկան իրաւունքով սչ 12 քան (2) Ինչպէս դատապարտեց Օրագիրը քաղցած միջո պատճառաւ:

Հասարակութեան զինուոր հրատարակի վրայ լեցուած սուտ ու սխալ հրատարակութեանց զեղծէն զինքն պաշտող Մեծազոր Տերութեանց ց :

Բայց այսօր ուրախութեամբ սրտի կաշեւեմ բոլոր ողջամիտ հասարակութեան որ Ս. Փող ժողովրդէան սիրելի թերթը հրատարակելու Սողին այն սագնապալից ժամանակին մէջ որ արդարեւ ամեն զգայուն սիրտք ամեն ժամանակէ աւելի պէտքըն զգալ սկսած էին :

Արեւելեան Փող սրբան կողմնակարութիւնը . անշահախնդրութիւնը և մանաւանդ ճշմարտախօսութիւնը իւր սուաջին թուէն սկսեալ ունեցած զխրանց միօրինակութենէն յայսնի կը տեսնուի . առաւել ևս իւր օրագրաց ոմանց դաւերը կեղծիքն ու խորդաւանանքը երևան հանող եզակի հանգամանքն ոչ նուազ ժողովրդեան գոհունակութեան արժանացած է :

Արդ՝ ուրիշ առթի թողով իւր 31 թիւ թերթովը Օրագրայ 353 թիւ թերթին քաղած մէկ յօդուածին հրատարակութեամբը ազգին մտտուցած օգտակար ծննդաբան միայն խօսիլ . այժմ իբր ժողովրդեան անկեղծ զգացմանց թարգման կը խնդրեմ որ չը շեղի բնաւ իւր ընթացած շաւղէն , թէև անտարակուսելի է որ ճշմարտութեան ճամբէն քայլողի մը դեմ անթիւ արգելքներ յարուցանողք բազմաթիւ են ազգին մէջ ստիպն սա ևս անտարակուսելի է որ ազգիս ողջամիտ և արդարախօս մասն ալ գիտէ ճանշել իրեն շահերը Վստմբ մը անձնական շահուց գերիներու ձեռքը չը թողու սշխատող թերթը , և ՚ի հարկին զայն վարձատրել :

Խնդրելով Տեր , որ սոյն երկառ զս Ձեր անկողմնակալ թերթին մէկ անկիւնը զետեղել բարեհաճիք .
Մնամ Աղգիս և Ձեր յառաջադիմութեան փափաքող
Գ. Քե-րճեան

Շարքթ օրուան հրատարակած յաւելուածնուս օրինակն է :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր Բ. Գուռը մատուցած հրաժարականը
Ներկայ Աղգային տագնապալից

Վիճակին խրիմեան Սրբազան Պատրիարքը վերջապէս չկրնալով հանդուրժել իւր հրաժարականը այսօր ուղղեց առ Ազգ. ժողովն ինչպէս նաև Մեծազոր Տերութեան ալ մատուց :

Մեր առած ստոյգ տեղեկութեանցը նայելով խրիմեան Սրբազան Բ. Գուռը մատուցած հրաժարականին՝ աւելի ցոյց տուեր է իր անձնական տկարութիւնը , և խնդրեր է որ անպատճառ իր հրաժարականը բնդուելու և արձակուի Պատրիարքական պաշտօնէն , որով իւր բնակութիւնն ալ առ այժմ Երուսաղէմատուն փոխադրած է :

ՆԵՐՔԻՆ

Կիմննաւթ թէ վէհ . Կայսրը Ռոսիականութեան պաշտօնէին հրաման բեր է որ բոլոր ռոսիականութեան համար պայրամեն յառաջ նոր ձեւով հազուսաներ շինել տայ :

Այժմ բաղմաթիւ գերձակք պաշտօնատուն կանչուած են , ըզգեստները կտրելի եղածին չափ շուտ հասցնելու համար :

Թիւրքիոյ Պրինտիղի հիւպատոս Քրիստօ էֆենտի կայսերական հրամանաւ անցեալ կիւրակէ Մայրաքաղաքս հասաւ :

Այսինի նախորդ միութեարքի Մուսթաֆա փաշա՝ որ բաւականատեն է Չմիւռնիոյ Տիվանը Թէմիղի ատեանը կը գատուէր Վարչական անհօգութեան պատճառաւ տեղի ունեցած հարստահարութեանց համար , Մայրաքաղաքս կանչուած է հաս դատուելու համար :
Վերջին Աւսարիական շոգենաւով հաս կ'սպասուի :

Յունաց Պատրիարքին կողմէ Մօնթ-Աթօզ զրիււած խառն յանձնաժողովը երկուշաբթի օրուընէ ՚ի վեր Մայրաքաղաքս հասած է :

Կ'ըսուի թէ այս յանձնաժողովը յաջողած է ցարդ անլուծելի մնացած բաւական խնդիրներ գոհա

ցուցիչ կերպով լուծելու և տեղւոյն վանականաց կողմէ բնաւ ր և է դէմադրութիւն մը չեն տեսած ինչպէս որ ՚ի սկզբան կը վստայուէր :

Յանձնաժողովը մօտ օրէն Ս. Սինօթին Վե լժողովոյն իւր գործոյն մանրամասն տեղեկագիրը պիտի մատուցանէ :

Չորեքշաբթի օր խղիւտի երկաթուղւոյն լօբօմօթիլը աւրուելով Պօսթանձի-պաշի մօտ կեցեր է , երկրորդ լօբօմօթիլ մը գալով մինչև Հայտար-փաշա բերեր է թրէնները :

Դամասկոսի , Սօսիա անուն թերթին մէջ կը կարդամք թէ ամեն անգի Դամասկոսէն անապատի ճամբով Մէկքէ երթալու համար երկող կարավանին երթեկեկութեան դիւրութեան համար տահմոնուած գուժմարը ամբողջապէս հատուցուեր տեղւոյն գանձէն :

Ստակի նուազութեանէն յաճօտի պատահած խել մը անկարգութիւնները ՚ի շնորհս տեղւոյն ընդհանուր կառավարչին ջանից այս տարի բոլորովին անհետացեր է :

Անդրիանուպօլիս լրագրոյն մէջ կը կարդամք թէ , հասարակաց ձեւութեանց պաշտօնատունէն ճանապարհաց շինութեանց և հասարակաց օգտակար աշխատութեանց համար գաւառները խրիււած արհեստագէտ և ուրիշ պաշտօնակարներ միմիայն սոյն պաշտօնատան հպատակութիւնը կ'ընդունին և ուղղակի պաշտօնէին հետ կը թղթակցին եղեր , առարկելով թէ տեղական կառավարութիւնը իրենց երկիրներումէջ ձեռք ստանուած հասարակաց շինութեանց և ճանապարհներու վիճակին վրայ բնաւ գաղափար չունին :

Իրաց կայս վիճակը բաղմաթիւ անպատեհութիւնք կը յարուցանեն , գործերը գէշ կերպով կ'աւարտին , աշխատութիւնք չեն յառաջանար :

Հասարակաց շինութեանց պաշտօնեան այս կ'ընձուտ խնդիրը մեղմացնելու համար կը ծանուցանէ նոյն պաշտօնատարաց թէ թէև իրենք միշտ պաշտօնէին կողմէ կ'անուանուին . բայց որովհետև իրենց պաշտօնը գաւառներու մէջ կը գործադրեն , պէտք է որ տեղական կառավարութեան անմիջական իրաւասութեան ներքե ըլլան :

ԱՌԵԻԵԼԵԱՆՓՈՂՄ

Վ. Ա. Ի. Պ. Ա. Կ. 16 հոկտեմբեր

Շաբաթ աւուր ներքին քրոջ մէջ
ուպագրական անուշադրութեան
պատճառաւ մէկ քանի սխալներ սը-
նորդած լինելուն կը փութամք զա-
նոնք ուղղել :

Երկուշաբթի օր Պոլսկարին մէ-
կը կ'մին ճամի ըսուած թաղին մէջ
գտնուած գինետանց մէկէն ներս
մտնելով, գինետանին հետ կ'ուրի
կը բռնուի և կ'ուրի միջոցին թեկն
դանակի հարուած մ'ուտելով անմի-
ջապէս հիւանդանոց կը փոխադրուի :

Իւսկիւտար Տաճիկ երիտասարդ
մը անձնասպանութեան զոհ գնացեր
է, ոստիկանութիւնը զայս իմանալով
անմիջապէս հասնելով քննութիւն
ըրեր և տեղեկացեր է որ յիշեալ
երիտասարդը աղջկան մը սիրահարած
ըլլալով, ճնողքը անուանութեան
հաւանութիւն չտալուն համար ինքը
ղինքը սպաննելու գիտամբք գտնա-
կալ կսկորդը կարեր է :

Ինչպէս միւր երկուսն թերթով
գրած էինք Գերմանիոյ գետպան Պ.
Ֆիշման մեռնող գործաւորին ըն-
տանեաց 5000 զրշ. ի նուէր մ'ընե-
լը. մեր վերջէն աւած տեղեկու-
թեանց չտրհիւ յիշեալ լրջն մի-
փոքր սխալը կուղղեմք :

Մ. Յ. Ինչ Պ. Ֆիշման գործաւոր
րին մահը կիմանայ անմիջապէս գոր-
ծակատար մը կը խրկէ նորա ընտան-
եաց մէր և ինչ վիճակի մէջ գտնու-
ւին իմանալու համար, և երբ կի-
մանայ թէ Հայաստան է հանգուցե-
լոյն ընտանիքը հետեւաբար սոյն գու-
մարը Գործակատարի մը կը յանձնէ
ըւղղակի նորա ընտանեացը ձեռքը
հասցնելու համար :

ՀԵՌԱԳՐԱԼ ՈՒՐԳ

ԱՌՍՏՐԻԱ — ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննա 16 հոկտեմբեր

Արժեթղթերը ինչպէս վրայ են,
Պորտան գոցուելու պատէն յուզ-
մունքը բաւական հանգարտեցաւ
Թուրքիոյ գետպան Բապոււի
բաշան կան Անգրաստիկ հետ ան-
սակ ջուր թիւն մ'ուենցաւ :

ԳԱՂՂԻԱ

Բարիկ 16 հոկտեմբեր

Պ. Նիկրա իւր կառավարութե-
ան մեկնելու հրամանն ընդունեց :

ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլին 16 հոկտեմբեր

Պ. Պիլզարք վիեննա մեկնեցաւ :

ԱՆԳՂԻԱ

Լոնտրա 16 հոկտեմբեր

Պանդան 235000 ոսկի մտաւ :

ԸՆԹԱՅԻ ԴՐԱՄՈՑ

Օսմ. ոսկին 100 զրուշի հաշուով

	Ղրշ.	Փրշ.
Անգղ. ոսկի	106	30
Գաղղ.	87	42
Բօլ	89	10
Քրքմից	51	5
Ճերմակ միճիտ տարր	104	20
Հինգուց	104	—
Մէթալի	104	10
Պղինձ	120	10

ԸՆԹԱՅԻ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Ղալաթիա 6 հոկտեմբեր

Ընդհ. Պարտ. Արժ. բաց	54	6
Քրքմից	55	1
Քարճր գին	55	10
Վիեննայի ջուր	54	6
Սոսիթիէ Ժ. Կնէրալ 1. Ս	9	15
Պանճատուն 1872ի	82	—
Սոսիթիէ Օթճուսն	3	80
Պանք աը Բօնսթ	6	12
Քրկտի Օսթրօ Թիւրք	3	18
Քրկտի Ժ. Կնէրալ 1. Օ	12	30
Թրամվայ	11	40
Բուսկիլի Արժ	124	1/2
»	67	1/2
Փոխառ. 69ի (անկարծ)	292	—
» 65ի	347	—
» 63ի	372	—

ԲՆՈՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Միւհէն Կոնստանտինովի իրա-
զոհաց ազնիւ գնով կը տպուին նա-
նակ, ծանուցապիւր, Նրաւիւրագիւ
լէն, ևն. Տաճիկերէն, Հայերէն
Յունարէն, Գաղղիերէն, ստուերով

ՊԱՅՄԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆՓՈՂՈՑ

Ստուերով 10 փարայի, այսինքն
Հայ ազգատիկ ընթերցասիրաց դիւրա-
մատչելի գնով: Խմբագրութիւնը պար-
տաւոր չամսերելով իւր անձն կարող ու
ձեռնհաս ընթերցողաց նաև այս գոհո-
ղութիւնն ընել, տարեկան բաժանորդա-
գրութիւնը երեք կարգերու բաժանած
է, իւրաքանչիւր կարգի ընտրութիւն
բաժանորդաց կարողութեանն ու խղճին
յանձնելով:

Ա. կարգ բաժանորդագր. 1 Օսմ. ոսկի
Բ. 1 1/2
Գ. 2

Ծանուցմունք ընդհանրապէս մէկ ան-
գամի համար 1 արծաթ մէճիտի կը հրա-
տարակուին, եթէ 10 տող աւելի չեն:
Աւելի անգամներու կամ 10 տողէ
աւելի եզող ծանուցմանց հրատարակու-
թեան համար մտնաւոր սակարկութիւն
կը լինի:

Որ և է գրութիւն պէտք է ուղղել
առ Տնօրէն-Խմբագիրն, Կ. Պօլիս, Վէրլի
խան գետնայարկ թիւ 3 սենեակը

Արեւելեան Փող ձեռքէ ծախուել
զատ կը ծախուի նաև Պահճէ-Բափու
սուճի Մ. Պօլոս աղայի իմանութը, և
Պէշիկթաշի, Օրթագիւղի Գուրուչէճի,
Բ. Հիսարի և Պէշքոզի տեղական թղթա-
տարութեան կայտրաններն:

ՏԵՐ ԼՐԱԳՐՈՑ Կ. ԷՐՁԻՆԵԱՆՆԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ

ԲԱՐԹՈՂ ՍՈՒՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

Կ. Պօլիս մէջի խան գետնայարկ Թիւ 30